

**ԴՊՐՈՑԱԿԱՆ ԲՈՒԼԼԻՆԳԻ ՍՈՑԻԱԼ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ
ՊԱՏՃԱՌԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

ՎԱՀԱՆՅԱՆ ԱՐՄԻՆԵ

*«Հայբուսակ» համլսարանի հումանիտար
ֆակուլտետի մանկավարժության և հոգեբանության ամբիոնի դասախոս
ՔՈՒՐՔՅԱՆ ԼՈՒՍԻԿ*

*Մանկավարժական գիտությունների թեկնածու,
ԳՊՀ հասարակական գիտությունների ամբիոնի դոցենտ*

Ժամանակակից հանրակրթության համակարգում բռնության կիրառման փաստերի աճող հավանականությունը թույլ է տալիս ոլորտի մասնագետներին ավելի կարևորելու միջանձնային փոխհարաբերությունների դերը երեխայի հոգեկան առողջության և հոգեբանական բարեհարմարության պահպանման գործում: Ձևավորվող անձի հոգեբանական անվտանգությանը սպառնացող վտանգներից է դպրոցական բուլլինգը:

Հոգեբանամանկավարժական գրականության մեջ բուլլինգը դիտարկվում է տարբեր մակարդակներով: Շվեդ գիտնական Պ. Պ. Հեյնեմանը առաջիններից էր, որ ուշադրություն դարձրեց բուլլինգի ֆենոմենի վրա: Նրա կողմից ներկայացվեց հրապարակում կոլեկտիվ հարձակման մասին անձի վրա, որը խանգարում էր խմբին զբաղվել առօրյա գործունեությամբ: Նման հարձակումը անվանվեց **մոբինգ** (անգլ. “mobbing”- բառից): Ավելի ուշ Կ. Լորենցն այս եզրույթը կիրառեց խմբից տարբերվող աշակերտի հանդեպ սովորողների ժխտողական վերաբերմունքը նկարագրելու նպատակով [5]: Դ. Օլվեուսն ընդարձակեց մոբինգ հասկացությունը հոգեբանական և ինտելեկտուալ այլ բաղադրիչներով՝ ներմուծելով **բուլլինգ** եզրույթը, իսկ մոբինգը դիտվեց որպես խմբային ազդեցության դրսևորում: Ըստ հայտնի հետազոտողներ Ա. Ա. Բոչավերի, Ս. Ո. Կրիվցովի, Վ. Բ. Կուզնեցովայի, Ե. Մ. Բիանկու, Մ. Ա. Ջավալաշինայի, Կ. Դ. Խլոմովի հետազոտությունների՝ բուլլինգը դիտվում է որպես նպատակասլաց, շարունակաբար կրկնվող ագրեսիվ վարք, որը հիմնված է անհավասար սոցիալական իշխանության կամ ֆիզիկական ուժի կիրառման հնարավորության վրա[2]: Հետազոտողների մեկ այլ խումբ (Ու. Կիմ, Կ. Կվարկ, Ս. Լի, Հ. Պարկ և ուրիշներ) վկայում են, որ բուլլինգի ենթարկված երեխաների մեծամասնությունը չի կարողանում կողմնորոշվել, թե հատկապես ինչ պատճառով են իրենց հետ այդպես վարվում:

Ամենաընդհանուր ձևով **դպրոցական բուլինգը (անգլ. “bullying”- քամահրանք, ճնշում բառից)** կարելի է ներկայացնել որպես միջանձնային փոխազդեցության ձև, երբ ֆիզիկական կամ հոգեբանական երկարաժամկետ բռնության է ենթարկվում անհատի կամ խմբի կողմից մեկ այլ աշակերտ (հազվադեպ նաև ուսուցիչ), որը չի կարողանում տվյալ իրադրության մեջ ինքն իրեն պաշտպանել [6]: Դա դաժանության դրսևորում է, երբ տվյալ պահին բռնություն գործադրող անձը հաճույք է ստանում՝ դիմացինին ցավ պատճառելով, ծաղրելով և նրա կողմից հնազանդություն ակնկալելով: Տուժողն այդ պահին ապրում է ամոթի, անարգանքի, արժանապատվության ոտնահարման զգացում, որի մասին, սակայն, չի կարողանում կամ չի ցանկանում հայտնել ուրիշներին (հատկապես մտերիմներին):

Ա. Ա. Բոչավերը և Կ. Դ. Խլոմովը առանձնացնում են երեք մոտեցում՝ կապված բուլինգի հետ.

1. Դիսպոզիցիոնալ մոտեցում: Կենտրոնանալ անձի առանձին հատկանիշների վրա, որոնք նրան ստիպել են դառնալ իրավիճակի զոհ կամ ագրեսոր: Պետք է իրականացնել հոգեբանական աշխատանք, որի նպատակն է զոհ-երեխայի մեջ ձևավորել որոշակի հմտություններ՝ ինքնավստահություն, հաղորդակցման հմտություններ, որոնք կօգնեն նրան պաշտպանվել նման իրավիճակներում, իսկ ագրեսոր-երեխայի մեջ ձևավորել հանդուրժողականություն, իջեցնել ագրեսիայի մակարդակը:

2. Ժամանակակից մոտեցում: Ուսումնասիրել բուլինգի հետ կապված ռիսկերը, օրինակ, երեխայի զգայունակության աստիճանը՝ կապված կյանքի իրադարձությունների հետ, որոնք կարող են ստիպել նրան դառնալ ագրեսոր կամ զոհ:

3. Կոնտեքստային մոտեցում: Ուսումնասիրել անձի շրջակա միջավայրը, փոխահարաբերություններն ընտանիքում կամ ընդհանրապես մարդկանց հետ, քանի որ շատ հաճախ բուլինգի նախադրյալները սկսվում են սխալ կառուցված հարաբերություններից, ծնողների սխալ մոտեցումից և այլն:

Բուլլերները կամ ագրեսորները հիմնականում ունեն հետևյալ հոգեբանական առանձնահատկությունները՝ իմպուլսիվություն, ագրեսիայի, տազնապայնության բարձր մակարդակ: Այս հատկանիշները ձևավորվում են դեռևս մանկուց և կախված են նրանից, թե մանկության տարիներին ծնողները ինչպես են բավարարել երեխայի պահանջմունքները: Օրինակ՝ կան ծնողներ, ովքեր չեն կարողանում բավարարել երեխայի հիմնական պահանջմունքները, այդ պատճառով էլ աստիճանաբար աճում է երեխայի բազային տազնապայնությունը, որն էլ հետագայում հանգեցնում է երեխայի՝ որպես ապագա ագրեսորի ձևավորմանը:

Այս խնդրին անդրադարձել է Կ.Հորնին: Նա համամիտ էր Զ.Ֆրոյդի այն մտքի հետ, որ մանկական ապրումները կարևոր նշանակություն ունեն մեծահասակի անձի կառուցվածքի և գործունեության ձևավորման գործում: Սակայն նրանց մոտեցումներում կային տարբերություններ. Հորնին չէր ընդունում Զ. Ֆրոյդի այն միտքը, որ գոյություն ունեն ունիվերսալ հոգեսեռական փուլեր: Կ. Հորնին համամիտ չէր նաև Զ. Ֆրոյդի այն մտքի հետ, որ երեխայի սեռական անատոմիան թելադրում է անձի հետագա զարգացման որոշակի ուղղվածություն: Ըստ Կ. Հորնիի՝ անձի զարգացման մեջ որոշիչ գործոն են հանդիսանում երեխայի և ծնողի միջև հարաբերությունները: Կ. Հորնին պահանջում էր բավարարմանը նշանակություն էր տալիս ֆիզիկական գոյատևման պահպանման մեջ. նա չէր ընդունում, որ դրանք անձի կառուցվածքում հիմնական դեր են խաղում: Երեխայի զարգացման մեջ գլխավոր դեր ունի անվտանգության պահանջումները: Այս դեպքում հիմնաքարային է սիրված, ցանկալի, վտանգից կամ թշնամական աշխարհից պաշտպանված լինելու պահանջումները: Երեխայի այս պահանջումների բավարարումը, ըստ Կ.Հորնիի, կախված է ծնողներից: Եթե ծնողները իրական սեր և ջերմություն են դրսևորում երեխայի հանդեպ, դրանով բավարարվում է անվտանգության պահանջումները: Սրա շնորհիվ հավանական է, որ կձևավորվի առողջ անձ: Ծնողների սխալ վերաբերմունքի արդյունքում երեխայի մոտ զարգանում են բազային թշնամանքի դիրքորոշումներ: Այս դեպքում երեխան հայտնվում է երկրնտրանքի առջև. նա կախված է ծնողներից և միաժամանակ նրանց պատճառով վրդովված է: Այդ պատճառով առաջ է գալիս այնպիսի պաշտպանական մեխանիզմ, ինչպիսին է արտամղումը: Արդյունքում երեխայի վարքը, որը ծնողական ընտանիքում անվտանգություն չի զգում, փոխվում է անօգնականության, վախի և մեղքի զգացման, որոնք էլ իրականացնում են հոգեբանական պաշտպանության դեր: Սրա նպատակը ծնողների հանդեպ թշնամական զգացումների ճնշումն է: Վրդովմունքի և թշնամանքի այդ ճնշված զգացումները դրսևորվում են այլ մարդկանց հետ երեխայի փոխհարաբերություններում, ընդ որում՝ ինչպես ներկայում, այնպես էլ ապագայում: Այս դեպքում ասում են, որ երեխայի մոտ առկա է բազային տագնապ՝ «միայնության և անօգնականության զգացում պոտենցիալ վտանգավոր աշխարհի առջև»: Հետևաբար եթե աշխարհը երեխան ընկալում է որպես վտանգավոր մի վայր, որտեղ նրան վտանգ է սպառնում, նա անընդհատ դրսևորելու է պաշտպանական վարք: Այսինքն՝ փորձելու է մյուսներին ենթարկել բուլլինգի, նվաստացնել, ծաղրել: Սա, իհարկե, ունի անգիտակցական բնույթ:

Այժմ, ներկայացնենք Կ.Հորնիի մշակած երեք կատեգորիաները, որոնք կազմում են բուլլինգի ձևավորման նախահարթակը:

- Կողմնորոշում դեպի մարդիկ՝ զիջող տիպ:

Այս կողմնորոշումը ենթադրում է փոխազդեցության այնպիսի ոճ, որին հատուկ է կախվածությունը, անվճռականությունը, անօգնականությունը: Նրանց ղեկավարում է հետևյալ իռացիոնալ գաղափարը.«Եթե զիջեմ, ինձ չեն դիպչի»: Նրանց պետք է, որ ուրիշները իրենց կարիքն ունենան, իրենց սիրեն, պաշտպանեն, ղեկավարեն: Նրանք հարաբերություններ ստեղծում են միայն մեկ նպատակով՝ խուսափել միայնության, անօգնականության և անպիտանության զգացումից: Նրանցում կարող է քողարկված լինել ագրեսիվ լինելու պահանջումը: Չնայած թվում է, որ այս մարդն ամաչում է ուրիշների ներկայությամբ, սակայն մնում է ստվերում: Այս վարքի տակ հաճախ թաքնվում են թշնամանքը, զայրույթը:

Այս տիպի մարդիկ ապագայում դառնում են պոտենցիալ <<զոհեր>>:

- Կողմնորոշում մարդկանցից՝ մեկուսացած տիպ:

Միջանձնային հարաբերությունների օպտիմիզացիայի այս ռազմավարությունն օգտագործող մարդիկ առաջնորդվում են հետևյալ գաղափարով.«Ինձ համար միևնույնն է: Եթե ես մի կողմ կանգնեմ, ինձ հետ ամեն ինչ կարգին կլինի»: Այս մարդիկ կորցնում են իրական հետաքրքրվածությունը ուրիշների հանդեպ: Այս կողմնորոշմանը բնութագրական է միայնության, անկախության և ինքնաբավարարվածության ձգտումը:

Այս տիպի մարդիկ բուլլինգի ժամանակ հիմնականում հանդես են գալիս որպես «դիտորդներ», ունենում են չեզոք դիրք:

- Կողմնորոշում մարդկանց դեմ. թշնամական տիպ:

Վարքի այնպիսի ոճ է, որին բնութագրական է դոմինանտումը, թշնամանքը, շահագործումը: Միջանձնային հարաբերությունների օպտիմիզացիայի այս ռազմավարությունն օգտագործող մարդիկ առաջնորդվում են հետևյալ գաղափարով.«Ես ունեմ իշխանություն, ինձ ոչ ոք չի դիպչի»: Մյուս բոլոր մարդիկ ագրեսիվ են, և կյանքը պայքար է նրանց բոլորի նկատմամբ: Ամեն ինչ ուղղված է սեփական դիրքի, պահանջումների ու ցանկությունների բավարարմանը:

Այս տիպի մարդիկ մեծանում են որպես ապագա իրավախախտներ և պոտենցիալ բուլլերներ կամ ագրեսորներ, որոնք վտանգ են սպառնում հասարակությանը:

Դպրոցական բուլլինգը հիմնականում ստորաբաժանվում է հուզական և ֆիզիկական բռնության ձևերի:

Հուզական բռնությունը զոհի մեջ առաջացնում է հուզական լարվածություն՝ իջեցնելով անձի ինքնագնահատականը: Դպրոցում հուզական բռնության ենթաձևերն են.

- մականուններով դիմելաձևը, ծաղրի ենթարկելը, անընդհատ, շարունակաբար կատարվող դիտողությունները, ոչ օբյեկտիվ գնահատականները (այդ թվում թվանշանի տեսքով), այլ երեխաների ներկայությամբ աշակերտին պարսավելը և այլն,

- աշակերտի հուզական մեկուսացումը, գործողությունների սահմանափակումը, հաղորդակցման բացակայությունը կամ դրանից հրաժարվելը (չեն ցանկանում երեխայի հետ համագործակցել, նստել միննույն նստարանին, ընդհանուր ժամանց կազմակերպել):

Ֆիզիկական բռնությունը ենթադրում է ֆիզիկական ուժի կիրառում աշակերտի, համադասարանցու հանդեպ, որի արդյունքում երեխան կարող է ենթարկվել ֆիզիկական տրավմայի: Ֆիզիկական բռնության շարքին են դասվում.

- ծեծը
- բռնի ուժի կիրառումը
- ապտակը
- երեխայի իրերին բռնությամբ տիրանալը
- մարմնական վնասներ հասցնելը և այլն:

Պետք է նշել, որ բռնության զոհ կարող է դառնալ յուրաքանչյուր երեխա, բայց ավելի հաճախ ընտրվում են այն աշակերտները, ովքեր անպաշտպան են կամ էլ ընդգծված տարբերվում են իրենց հասակակիցներից: Դպրոցական բռնության առավել հաճախ ենթարկվում են այն երեխաները, ովքեր

- ունեն ֆիզիկական թերություններ կամ տարբեր արատներ, օրինակ՝ ակնոց կրողները, թույլ լսողություն ունեցողները, հենաշարժողական համակարգի ախտահարումներով երեխաները՝ (ՄՈՒԿ-ի դեպքում),

- ունեն վարքագծի առանձնահատկություններ՝ ինքնամիփոփ են կամ իմպուլսիվ վարք են դրսևորում,

- ունեն արտաքին շեշտված առանձնահատկություններ՝ կարմրամազ երեխաներ, պեպեններ ունեցողներ, մարմնի մեծ քաշ կամ տարիքին ոչ բնորոշ հասակ ունեցողներ, աքսելերանտներ և այլն,

- ունեն սոցիալական հմտությունների դեֆիցիտ,

- ունեն դպրոցական վախեր,

- վաղ սոցիալական փորձի պակասի պատճառով ունեն աշակերտական խմբում դժվար ինտեգրվելու հակումներ /տնակյացներ/,

- ունեն տարաբնույթ հիվանդություններ՝ էպիլեպսիա, էնուրեզ, էնկոպրեզ կակազություն, խոսքի խանգարումներ՝ դիսլալիա, դիսգրաֆիա, դիսլեքսիա, դիսկալկուլիա և այլն,

- ունեն ցածր ինտելեկտ և ուսուցանելիության ցածր մակարդակ:

Պետք է նշել նաև, որ այն երեխաները, ովքեր մեծացել են ծնողների կողմից հուզական դեպրիվացիայի պայմաններում կամ սոցիալական որբեր են, ավելի հակված են բռնություն գործադրելու, քան նրանք, ովքեր մեծացել են լիարժեք ընտանիքներում:

Դպրոցական բռնությանը նպաստում են.

- մանկավարժական կոլեկտիվում տիրող բարոյահոգեբանական մթնոլորտը,

- ուսուցչի անտարբերությունը և ոչ կոմպետենտությունը,

- դպրոցական կառավարման համակարգը:

Դպրոցական բռնությունը երեխայի վրա կարող է ունենալ ինչպես ուղղակի, այնպես էլ անուղղակի ազդեցություն.

Երկարատև ճնշող ազդեցությունը կարող է երեխայի «ես»-ի ձևավորման վրա բացասական ազդեցություն ունենալ: Ինքնագնահատականը իջնում է, և նման երեխան հետագայում փորձում է խուսափել մարդկանց հետ շփումից: Լինում է նաև հակառակը. երեխաներն են հրաժարվում այդ երեխայի հետ շփումից: Նման երեխան հետագայում կարող է ձախողակի պիտակ կրել աշակերտական կոլեկտիվում:

- Ցածր սոցիալական կարգավիճակ ունեցող երեխաները մեծ հակվածություն ունեն նյարդահոգեկան և վարքային խանգարումների նկատմամբ: Կարող են ունենալ դեպրեսիա, ախորժակի բացակայություն, անորեքսիա, բուլեմիա:

- Դեռահասների մոտ կարող է դպրոցական բռնությունը ազդել անձի իդենտիկության զարգացման վրա:

- Բուլլինգի զոհերի մոտ չեն զարգանում սոցիալական հմտությունները, դժվարանում են շփվել հատկապես հասակակիցների հետ:

- Բռնության ենթարկված երեխան կարող է ունենալ դպրոցական ֆոբիա, աուտոագրեսիա: Եվ երեխան վիճակից դուրս գալու համար կարող է դիմել սուիցիդալ ելքի:

Դպրոցական բուլլինգի զոհերին կարելի է հայտորոշել ըստ որոշակի վարքային և արտաքին դրսևորումների.

- երեխային պատկանող դպրոցական իրերը անխնամ են, աղտոտված (օրինակ՝ դասագրքերը),

- բուլլինգի գոհը դասի ժամանակ վախվորած է, հատկապես երբ դասահարցման է մասնակցում,

- այլ երեխաներից դասամիջոցներին իրեն հեռու է պահում, հատկապես ավագ դպրոցականներից, սակայն ձգտում է մոտ լինել ուսուցիչներին և այլ մեծահասակների,

- բռնության ենթարկված երեխան հակված է ուշանալ դասերից կամ էլ ուշ լքել դպրոցը:

Բռնություն գործադրողների՝ բուլլերների վարքը նույնպես ունի սոցիալ-հոգեբանական պատճառականություն: Ամենից հաճախ բռնության դիմում են այն երեխաները, որոնք

- ապրում են ավտորիտար ընտանեկան ոճի պայմաններում,

- ապրում են ոչ լիարժեք ընտանիքներում, երբ ծնողներից առնվազն մեկը բացակայում է,

- ապրում են անբարենպաստ կամ դիֆուզ սահմաններ ունեցող ընտանիքներում,

- ապրում են այնպիսի ընտանիքներում, որի անդամներն ունեն բռնության հանդեպ գենետիկ հակվածություն,

- որոնց ծնողները, հատկապես մայրերը աչքի են ընկնում կյանքի հանդեպ հոռետեսական վերաբերմունքով:

Դեռահասության շրջանում մեծ է հատկապես ուսուցիչների դերը: Ինչպես կարող է ուսուցիչը միաժամանակ լինել և վախի օբյեկտ, և յուրաքանչյուր երեխայի մտերիմ ընկերը: Իրականում սա շատ բարդ խնդիր է, և ուսուցիչները պետք է տեղեկացված լինեն տարիքային այս շրջափուլի առանձնահատկություններից: Դեռահասները ձգտում են ինքնուրույնության. ոմանք դա անում են ագրեսիայի միջոցով՝ փորձելով ավելի ուժեղ երևալ: Հսկողության տակ գտնվող յուրաքանչյուր երեխայից ուսուցիչը ստանում է ամենակարող ես-ի դեր և այդպիսով նրանց ղեկավարելու իրավունք է ունենում: Եթե նա խաղա պարզապես ծնողի դեր, ապա վաղ մանկության բոլոր չլուծված խնդիրները դեռահասի մոտ կվերահսկվեն, բայց կվերածվեն այլ բանի. արդյունքում նախանձն ու մրցակցությունը կկործանեն խումբը: Բայց եթե ուսուցիչը կարողանա իր վրա վերցնել ամենակարող ես-ի դերը, ապա պարտադիր ենթարկումը կփոխարինվի ինքնական հնազանդությամբ: Դա կօգնի, որ խմբում երեխաները լինեն ավելի համախմբված և միասնական:

Մեր օրերերում բուլլինգը խիստ արդիական խնդիր է, սակայն այս թեմայի հետ կապված բավականին սխալ մոտեցումներ կան:

Օրինակ՝

• Ուսուցիչը կարող է հեշտությամբ հայտնաբերել վեճի պատճառը և դադարեցնել այն՝ այդպես էլ չպարզելով, թե ով է <<զոհը>>, իսկ ով՝ «ագրեսորը»:

• Բուլլինգը կարող է հանդիպել յուրաքանչյուր սոցիալական խմբում:

• Ուսուցիչները կարող են անհանգստանալ միայն ֆիզիկական բուլլինգի ժամանակ:

Նման սխալ մոտեցումները արդարացնում են ագրեսիվ երեխաների պահվածքը, մեղադրում են զոհերին և աջակցում են դիտորդներին, ովքեր պասիվ վերաբերմունք ունեն բուլլինգի հանդեպ: Այս դեպքում մեծ է հավանականությունը, որ նման երևույթները, երբ չեն բարձրաձայնվում, կարող են ավելի հաճախ կրկնվել:

Խնդիրը դժվարանում է նաև նրանով, որ հետևելով <<պատվի>> օրենքին՝ բուլլինգի զոհերը մեծերին ոչինչ չեն ասում այդ մասին, լռում են նաև վկաները: Սակայն առաջին հերթին ծնողները պետք է խիստ հետևողական լինեն:

Կան մի քանի մեխանիզմներ, որոնք կօգնեն խուսափել բուլլինգից:

1. Շատ հաճախ ծնողները երեխային թույլ չեն տալիս ինքնուրույն որոշումներ կայացնել, այլ նրանք են դա անում երեխայի փոխարեն: Դա շատ սխալ է, քանի որ երեխան պետք է սովորի պատասխանատու լինել իր որոշումների և արարքների համար: Նա պետք է կարողանա ինքնուրույն լուծել իր խնդիրները: Կարելի է տանը այնպիսի իրավիճակներ ստեղծել, որ երեխան դրսևորի իրեն տարբեր դերերում, գտնի լուծում: Սա կօգնի որպեսզի մենք ավելի լավ ճանաչենք երեխային:

2. Երեխաները շատ հաճախ որպես մոդել ընտրում են իրենց ծնողներին և նմանակում են նրանց վարքը: Այդ պատճառով էլ կարևոր է, որ ծնողները իրենց խոսքը ցույց տան նաև վարքով:

3. Շատ կարևոր է նաև ուսուցիչների վարքը, քանի որ երեխաներն իրենց ժամանակի զգալի մասն անց են կացնում դպրոցում: Ուսուցիչները պետք է կարողանան ճիշտ ժամանակին կանխել բուլլինգը, երեխաների մեջ սերմանել սեր ու հարգանք միմյանց նկատմամբ: Դա պետք է անել ոչ միայն դասերի ժամանակ, այլև դասերից դուրս: Գործողությունների և դիրքորոշումների միջև անհամապատասխանությունը կարող է հանգեցնել աշակերտների կողմից ուսուցչին՝ որպես հեղինակություն ընդունելուց հրաժարմանը:

4. Շատ կարևոր է ուսուցիչների, հոգեբանների և ծնողների համագործակցությունը: Պետք է միջոցներ ձեռնարկել բուլլինգը կանխելու

համար, ինչպես նաև աշխատանք տանել նման խնդիրներ ունեցող երեխաների հետ: Դրա համար պետք է.

- ախտորոշել երեխայի հոգեբանական, հուզական առանձնահատկությունները, ինչպես նաև դրդապատճառային-պահանջմունքային համակարգը,

- աշխատանք տանել ոչ միայն երեխաների, այլև ուսուցչական կազմի և ծնողների հետ,

- երեխաների հետ իրականացնել խորհրդատվական-շտկողական աշխատանք (բուլլերներ, զոհեր, դիտորդներ),

- ճիշտ կազմակերպել կրթական համակարգը. երեխան պետք է ունենա անհրաժեշտ գիտելիքներ բուլլինգի մասին: Պետք է տալ հատուկ գրականություն կամ դիտել ֆիլմեր այդ թեմայի վերաբերյալ: Երեխայի մեջ ձևավորել այնպիսի արժեքներ, ինչպիսին են՝ հարգանքը մարդկանց իրավունքների հանդեպ, սերը, վստահությունը, հավասարությունը և այլն:

Կան բազմաթիվ տեխնոլոգիաներ, որոնք կօգնեն ավելի ճիշտ կազմակերպել դպրոցական առօրյան և ավելի հեշտ լուծել նման խնդիրները: Օրինակ՝ մանկավարժական տեխնոլոգիաների թեմատիկ կիրառումը. գործնական-դերային խաղեր, հոգեբանական թրեյնինգներ: Ինչպես գիտենք, ցանկացած համատեղ գործունեություն, որը անհրաժեշտ է իրականացնել մեկ նպատակի հասնելու համար, միավորում է տվյալ խմբի մասնակիցներին:

Կան այլ խանգարող հանգամանքներ, որոնք կարող են հանգեցնել բուլլինգի.

- լռությունը, խնդրի ժխտումը,
- լուրջ չվերաբերվելը խնդրին,
- բուլլինգին վերաբերվելը որպես անձնական խնդիր, այլ ոչ թե որպես համընդհանուր հասարակական

- հանդուրժողականություն՝ ծնողների կողմից երեխաներին բուլլինգի ենթարկելու հանդեպ,

- բուլլինգը կանխելու կամ մասնակիցներին պատժի ենթարկելու սահմանված կարգի բացակայություն,

- երեխային սթրեսի ենթարկելը, վախեցնելը գոյություն չունեցող հերոսների, առասպելների հորինման միջոցով,

- խնդրի նրբությունը չգիտակցելը,
- թերի արժեքային կողմնորոշումները,
- ուսուցչի դերը թերագնահատելը՝ որպես խմբի ղեկավար,
- վեճերի լուծման հմտությունների բացակայությունը,

- հոգեբանական հմտության բացակայություն. չկարողանալ տարբերել իրադրության մեջ՝ ով է զոհը, ով՝ ագրեսորը,
- բուլլինգի մասին գիտելիքների պակասը,
- բռնության բացահայտման վերաբերյալ հատուկ մեթոդիկաների բացակայությունը:

Այսպիսով, հոգեկանխարգելման նպատակով կարևորելով մասնագիտական թրեյնինգային ծրագրերի ներմուծումը հանրակրթական ոլորտ հատկապես դեռահասների տարիքային խմբում՝ նպատակասլաց մասնագիտական աշխատանքի շնորհիվ դպրոցական բուլլինգի դիսկերը հնարավոր է կրճատել՝ զարգացնելով արդյունավետ հաղորդակցման ձևերը:

Բանալի բառեր՝ բուլլինգ, մորինգ, դեռահասներ, հոգեկանխարգելման, թրեյնինգային ծրագրեր, բռնության:

Օգտագործված գրականություն

1. Безруких М., О тех, кого травят : консультация психолога / Марьяна Безруких // Здоровье школьника, 2015, № 6, С. 56–57.
2. Бочавер А. А. , Буллинг как объект исследований и культурный феномен// Психология, 2013, № 3, с.149-159
3. Галузина О., Искусство в помощь: [арт-терапия и её возможности в преодолении буллинга] / Ольга Галузина // НаркоНет, 2015, № 1, С. 20–22. ольника, 2015, № 6, С. 56–57.
4. Гусев В., Повелитель мух: школьная травля – тема родительского собрания / Вадим Гусев, Юлия Волохова // НаркоНет, 2015, № 3, С. 30–33.
5. Калинина Р.Р., Психолого-педагогическая программа профилактики буллинга среди школьников [Текст] /Р.Р. Калинина//Психология и педагогика;методика и проблемы практического применения,2016, Ном.52, С.52-56
6. Малкина-Пых И.Г., Психологическая помощь в кризисных ситуациях, Москва, Эксмо, 2008, 928с
7. Мэтьюз Э., Останови их!: как справиться с обидчиками и преследователями/ Эндрю Мэтьюз, Москва, Эксмо, 2013, 231 с. – (Психология. Счастье по Мэтьюзу).
8. Снайдер Д. , Практическая психология для подростков, или Как найти своё место в жизни : пер. с англ. / Ди Снайдер, Москва, АСТ-Пресс, 1998, 288 с
9. Тор А., Правда или последствия / Анника Тор ; пер. со швед. И. Матыщиной, Москва, Самокат, 2011,149 с.

SOCIO-PSYCHOLOGICAL CAUSES OF SCHOOL BULLYING

VAHANYAN ARMINE

Assistant of the Department of Pedagogy and Psychology, “Haybusak” University of Yerevan

KURKCHYAN LUSIK

Candidate of Pedagogical Sciences,
Associate Professor, GSU lecturer

One of the acute problems of modern psychology and pedagogy - school bullying, its varieties and typical behavioral forms of the victim are discussed in the article. An important factor in reducing the risk of bullying among teenagers is a professionally developed training program which has great psychoprophylactic significance.

Key words: *bullying, mobing, teenagers, mental retardation training programs, violence.*

СОЦИАЛЬНО-ПСИХОЛОГИЧЕСКАЯ ПРИЧИННОСТЬ ШКОЛЬНОГО БУЛЛИНГА

ВАГАНЯН АРМИНЕ

Ассистент кафедры педагогики и психологии
Ереванского университета “Айбусак”

КУРКЧЯН ЛУСИК

Кандидат педагогических наук, доцент, ГГУ, преподаватель

В данной статье обсуждается одна из острых проблем современной психолого-педагогической отрасли - школьный буллинг, его разновидности и типичные поведенческие формы жертвы. Важным фактором снижения риска буллинга среди подростков является профессионально сработанная тренинговая программа, которая имеет большую психопрофилактическую значимость.

Ключевые слова: *буллинг, моббинг, подростки, психопрофилактическая, тренинговая программа, насилие:*

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 27.03.2019թ.:

Հոդվածը գրախոսվել է 25.04.2019թ.: